
ԳԵՎՈՐԳ ՇԵՐԵՆՑ

(1848-1921 թթ.)

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս. Ա.

Հայ մշակույթի, մասնավորապես հայ բանագիտության պատմության մեջ նշանակալից տեղ ունի XIX դ. երկրորդ կեսի հայ անվանի բանահավաք, մանկավարժ, հասարակական գործիչ Գևորգ Գրիգորի Շերենցը: Նա ծնվել է 1848 թ. Վանում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում, ապա վարժարանում: 1870 թ. նա մեկնում է Թիֆլիս և զբաղվում մանկավարժությամբ: Թիֆլիսում նա սերտ կապեր է հաստատում տեղի մշակութային, հասարակական գործիչների հետ, ուշի- ուշով հետևում հայրենիքում կատարվող իրադարձություններին, թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացվող բռնաբարքներին: 1877 թ. հին Բայազետի ու նրա շրջակա գյուղերում հայերի նկատմամբ կատարված բարբարոսությունները խոր վիշտ են պատճառում Գ. Շերենցին: Այդ դեպքերից խորապես ցնցված՝ իր խոհերն ու տրամադրությունները նա որոշում է արտահայտել «երգեր գրելով ու տաղաչափելով»: Նման մտահղացումը պայմանավորված էր «կրած վշտերից սփռվելով» և «քարացած սրտերը մեղմացնելու» հույս ու հավատով¹: 1880-ական թվականներից սկսած՝ նա «Արձագանքի» էջերում տպագրում է Տաճկահայաստանում տեղի ունեցող տարաբնույթ դեպքերի վերաբերյալ տեղեկատվական հոդվածներ («Նամակ Վանից», 1882, N 4, «Տաճկահայաստանի ուսումնաբանական դրությունից», 1884, N 38): 1883 թ. Խրիմյան Հայրիկի հրավերով ուսուցչական աշխատանքի է անցնում Վարազա Ժառանգավորաց դպրոցում: 1884 թ. Թիֆլիսում հայ մշակութային, հասարակական գործիչների (թվով՝ 146), այդ թվում և Հովհ. Թումանյանի օժանդակությամբ նա հրատարակում է «Սրտի թարգման կամ բանաստեղծություններ» ժողովածուն: Այն նվիրում է Խրիմյան Հայրիկին հետևյալ ընծայագրով. «Սրբազան Հայրիկ, ցանկալի էր ինձ՝ Ձերային բարձր սրբազնության քաղցր հովանավորության ներքո ունեցածս պաշտոնավորությանս միջոցավ ձեռք բերած աշխատասիրությանց առաջինը Ձեր պատվական անվան նվիրել»²: Գրքում տեղ են գտել իր և Վարազա դպրոցի սաների գրած հայրենասիրական, կոտորածի, գաղթի, սիրո, բնության վերաբերյալ ստեղծագործություններ: Մանկավարժ Գ. Շերենցը անձամբ է զգացել թուրքական կառավարության հայկական դպրոցների նկատմամբ իրականացվող դաժան քաղաքականությունը: Խստագույնս վերահսկվում էին հայկական դպրոցները, արգելվում էր ազգային երգերի, հայոց պատմության դասավանդումը: Հայրենասեր, ազգային գաղափարներով ներշնչված Գ. Շերենցը 1885 թ. անդամակցում է Վանում հիմնադրված Արմենական կուսակցությանը, որի նպատակն էր

¹ *Շերենց Գ.*, Սրտի թարգման կամ բանաստեղծություններ, Թիֆլիս, 1884, (տե՛ս ժողովածուի ընծայականը):

² Նույն տեղում:

արևմտահայության համար հեղափոխությամբ ձեռք բերել ազատ ապրելու, գործելու մարդկային իրավունքներ: Գ. Շերենցը համագործակցում է հիշյալ կուսակցության նշանավոր դեմքերի՝ Մ. Ավետիսյանի, Գ. Թերլեմեզյանի և այլոց հետ: 1880-ական թվականներին, արձագանքելով Արևմտահայաստանում և Արևելահայաստանում բանահյուսական և ազգագրական նյութերի գրառման շուրջ ծավալված աննախադեպ շարժմանը, Գ. Շերենցը Վանից, Շատախից ու Մոկսից գրառում է տարաբնույթ նյութեր և դրանք 1885 թ. Թիֆլիսում տպագրում «Վանա սագ» խորագիրը կրող առաջին պրակում: 1885 թ. Թիֆլիսից Վան վերադառնալիս նրան ձեռքակալում են թուրք ոստիկանները՝ ազգային գաղափարներ քարոզելու մեղադրանքով: Նույն թվականին բանտից ազատվում է, բայց նրան արգելում են մանկավարժությամբ զբաղվել: Տեղի կուսակալ Բահրի փաշայի կողմից նրան տրվում է Քաջբերունյաց Արձեշ գավառի հարկահավաքի պաշտոնը: Այդ պաշտոնում նա պետք է համագործակցեր միայն «աշիրերի քրդերի» հետ: Դա պատրվակ էր նրան հոգևոր կյանքից հեռացնելու, ազգային ոգին ճնշելու նկատառումով: Ազգային գաղափարներով համակված Գ. Շերենցը, չենթարկվելով նման խարդավանքների, շարունակում է իր կուսակից ընկերների հետ համատեղ պայքարը՝ արևմտահայերի մարդկային իրավունքների ոտնահարման դեմ: 1890-ականի սկզբները Վասպուրական նահանգի և Տաճկահայաստանի հայկական գլխավոր շրջանների հայ ազգաբնակչությունը Հայկական հարցի առնչությամբ սկսել էր մի շարժում: Այդ լարված իրավիճակում 1893 թ. Գ. Շերենցը հրավեր է ստանում Բաղեշի Ս. Գևորգ եկեղեցու հոգաբարձության կողմից՝ Վանի վերաքննիչ ատյանի նախագահ, սիրիացի արաբ Ահմեդ Վասֆի էֆենդու հետ ուղևորվելու Բաղեշ՝ տեղի Ս. Գևորգ դպրոցում դասավանդելու: Դպրոցում նրա գործընկերն էին ավագ ուսուցիչներ Մ. Մկրյանը, Հ. Դոդոխյանը: Թուրքերի հետապնդումները շարունակվում են և Բաղեշում: 1894 թ. մարտի 15-ին Գ. Շերենցը դասը վարելիս, երբ աշակերտներին ներկայացնում էր օսմանյան պատմության այն հատվածը, թե առաջին Օսմանը, հաջորդելով Էրթողրուլին, ինչպես է հիմնել ներկա տերությունը, անակնկալ դասարան է մտնում թաղային մի պաշտոնյա՝ ոստիկանի ուղեկցությամբ: Գ. Շերենցին դպրոցից տանում են ոստիկանատուն, ապա նահանգական դատախազի մոտ: Հարցաքննությունից պարզվում է, որ Գ. Շերենցը, ուսուցչական կազմը և հոգաբարձությունն ամբաստանել են թուրքերին ինչ-որ «երմենի մեսելեխով»՝ Հայկական հարցով:

Պարզվում է, որ իր ընկերները Վանում արդեն բանտարկված են, իսկ ինքը Բաղեշում վաղուց ի վեր հսկողության տակ է գտնվում: Նրա ձեռքակալության լուրը հասնում է հոգաբարձությանը: Տեղի երևելիներից Բաղդասյանի երաշխավորությամբ նրան ժամանակավորապես ազատ են թողնում: Գ. Շերենցի մի վկայությունից պարզվում է նաև, որ թուրքական կառավարության կողմից հատկապես ուսուցիչներն էին վերահսկվում, և կասկածյալներն անմիջապես բանտարկվում էին: Այս առթիվ Գ. Շերենցը գրում է. «Ուսուցիչներ, նահատակ ուսուցիչներ. նոքա ավելի են տուժել: Դեռ 1895 թ. Վանից սնոտի պատրվակներով տարագրվեցան Մ. Փորթուգալյան, Տաճատ Ասլանյան, Մ. Թերլեմեզյան, Օտյան և

այլքն և քանի քանիսներ, որոնք չար փուշ, չար տատասկ էին ֆանատիկ թուրքերին»³։ Նրանք հատկապես ամբաստանվում էին երեխաներին ազգային-հայրենասիրական երգեր ուսուցանելու մեղադրանքով։ Մեկ ամիս անց Գ. Շերենցը բանտարկվում է։ Բաղեշի խոնավ ու մութ գնդան ուղեկցող ոստիկանը, հեզնելով նրան, ասում է. «Հիմա նստիր այստեղ և լավ երգիր ֆիդայական երգերը»⁴։ Նա բանտարկվեց Ավագ չորեքշաբթի։ Բաղեշի բանտից Գ. Շերենցին տեղափոխում են Վանի բանտ, որտեղ գտնվում էին իր ընկերները և հոգաբարձության անդամները։ Բանտից ազատվելով՝ նա Վանում մնում է հազիվ երկու շաբաթ. Բաղեշում սպասում էին իր պաշտոնակիցներն ու հոգաբարձությունը։ 1894 թ. մայիսի վերջերին Բաղեշում նա անցնում է ուսուցչի իր ընդհատված պարտականություններին։ 1895 թ. սեպտեմբերին Գ. Շերենցը տեղափոխվում է Վան և դասավանդում Արարուց երկսեռ դպրոցում։ Վան տեղափոխվելը պարտադրված չէր որևէ մեկի կողմից, պարզապես նա նախընտրում էր «մեռնել հայրենիքում, հայրենյաց հետ»⁵։ Հիշյալ դպրոցում մանկավարժները դասերը վարում էին լարված իրավիճակներում։ 1896 թ. հուլիսի 3-ին Գ. Շերենցը դասարանի լուսամուտից նկատում է, որ հազարապետ Հայիմ էֆենդին, մի խումբ զինված մարդկանցով անցնելով դպրոցի բակով, գնում է դեպի Կլոր-Դար կոչված՝ հայերով ու թուրքերով բնակեցված թաղամասը։ Նրա աչքերի առջև թուրքերը տասնյակ հրացաններ «միասին պարպեցին. դա առաջին նշանն էր՝ համախմբված խուժանին անարգել հարձակումների, ուր որ պետք էր։ Չանցած հինգ րոպե, մզկիթներում հավաքված ամբոխը, զինված զանազան սպանիչ զործիքներով, հարձակվեց հայ տների վրա՝ «Մահ, մահ գյավուրներին» գոչելով»⁶։

Վանի կոտորածից երեք ամիս անց Կովկաս գաղթողների թվում էր նաև Գ. Շերենցն իր ընտանիքով։ Նա բնակություն է հաստատում Նոր Բայազետում։ Իրեն հատկացված բնակարանում նրան մեծ անակնկալ էր սպասվում։ «Որքան եղավ ուրախությունս,- գրում է Շերենցը,- երբ այդ հանրային կողոպտված ապրանքներից ազատված սենյակիս հատակի վրա ցրիվ ընկած գրքերիս և այլ գրվածքներիս մեջ տեսա «Վանա սագի» 2-րդ մասի համար պատրաստված նյութերը, մեծ մասը պատառոտված»⁷։ Երեք տարի անց նա Նոր Բայազետից տեղափոխվում է Թիֆլիս և այնտեղ 1899-ին հրատարակում «Վանա սագի» երկրորդ պրակը։ Հայրենաբաղձության կարոտը սրտում՝ Գ. Շերենցը Թիֆլիսում շարունակում է իր նվիրական գաղափարների իրագործումը։ Նա ձեռնամուխ է լինում Վան-Վասպուրականի պատմական հուշարձանների, սրբավայրերի նկարագրման աշխատանքներին՝ ձեռքի տակ չունենալով այն ձեռագրերը, որոնք դեռևս 1891-1892 թթ., պաշտոնապես շրջագայելով տարածաշրջանի ողջ գավառներում, գյուղերում ու ավաններում, պատրաստել էր հրատարակության։ Նյութերի կորստ-

³ *Շերենց Գ.*, Ալթըն դերեսի կամ մի գիշեր Բաղեշի բանտում, Թիֆլիս, 1910, էջ 12-13։

⁴ Նույն տեղում, էջ 14։

⁵ Նույն տեղում, էջ 50։

⁶ *Շերենց Գ.*, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 36։

⁷ Վանա սագ, հ. 2, 1899, առաջաբան։

յան պատճառը, Գ. Շերենցի իսկ վկայությամբ, «վերջին տխուր դեպքերն են. ինչպես ջարդուփշուր արին մեր բնակավայրի ամեն ինչ, նույնպես և իմ այդ թղթի կտորները, սևագրությունները կուլ գնացին վերահաս հրձիգությանց, և ինձանում մնացին լոկ հիշողություններն ու տպավորությունները»⁸: Հայրենիքի յուրաքանչյուր տեղավայրին քաջատեղյակ Գ. Շերենցը հիշողությամբ վերաշարադրում է ավելի քան 76 սրբավայրերի տեղագրությունը և 1902 թ. Թիֆլիսում հրատարակում «Սրբավայրեր» խորագիրը կրող ուշագրավ գրքում: Առաջաբանում հայրենակիցներին և ազգակիցներին ուղղված խոսքում բացահայտվում են գրքի հրատարակման դրդապատճառները: «Վտարանդված լինելով մեր սիրելի բնակավայրից, գրում է Գ. Շերենցը, և ապաստանելով Կովկասում, ռուսաց ողորմած կայսրության ապահով հովանու տակ, չպիտի մտահանենք մեր սրբավայրերը, մեր նվիրական ուխտատեղիքը, որոնք մեր մանկությունից սկսած տվել են մեզ շատ ու շատ հոգեկան, մտավոր ու բարոյական օգուտներ՝ հիշեցնելով մեզ մեր անցյալ պապերի փառավոր ու հիշատակաց արժանի գործքերը»⁹: Նրա մի այլ վկայությունից պարզվում է, որ այդ սրբավայրերը տարբեր ազգերի սիրված ուխտավայրերն էին: «Վկա են երկինք ու երկիր, գրում է Շերենցը, Աստված, հրեշտակ և համայն մարդիկ, որ այդ սրբավայրերը հազար ու բյուր մարդոց, լինեին դոքա հայ, թուրք, քուրդ, ասորի, եվրոպացի, հանապազօրյա մշտառատ հաց ու ջուր, սերով ու կարագով մեկտեղ անխտրաբար տվել ու հյուրասիրել էին օրերով ու շաբաթներով: Իսկ այժմ, նույնպես վկա են, որ շատերն այդ սրբավայրերից զրկված ու կողոպտված ամեն կայք ու կյանքից և շատերը խորթացած իրանց հաստատահիմն շենքերից, ավերակաց կարգն են դասվել. միաբանություն ցրիվ ընկած և կամ ով գիտե, ինչ եղանակով տարագրյալ են անհայտ ու անլուր»¹⁰: Կորցրածը վերագցունելու լավատեսությամբ են հնչում նրա հետևյալ խոսքերը. «Բավականանք միայն այնու, որ իցիվ թե գա ժամանակ, երբ այցելություն լինի ամեն վտարանդի գաղթականին, դառնալ յուր բնակավայրն, կարկատել ու նորոգել ավերակները, ապրել ու մեռնել պապենական հարկի տակ, տանը, հանդ ու հանդաստանի միջում, կրկին պաշտել ու հարգել յուր սրբավայրերը, ժամն ու ժամատուն, որով այնու մխիթարված կլինի յուր կրած ու ենթարկված ամեն կերպի թշվառություններից, որով տառապեցան խիստ»¹¹: Բախտի ծանր հարվածներից հոգեմաշ Գ. Շերենցին հանգիստ չէին տալիս հայրենիքի հետ կապված հիշողությունները: 1910 թ. Թիֆլիսում նա հրատարակում է «Ալթըն դերեսի կամ մի գիշեր Բաղեշի բանտում» գիրքը: Դա ինքնակենսագրական մի հիշատակարան է, որում անձնական կյանքի հանգամանքները հմտորեն զուգակցված են 1893-1896 թթ. Արևմտահայաստանում կատարված դեպքերին ու իրադարձություններին: Գրքում զետեղված հուշերը, նկարագրված դեպքերը հույժ կարևոր վավերագրեր են XIX դ. վերջերին թուրքերի իրականացրած հայաջինջ քաղաքականության վերաբերյալ: Գ. Շերենցը

⁸ **Շերենց Գ.**, Սրբավայրեր, էջ 160:

⁹ Նույն տեղում, Առաջաբան:

¹⁰ Նույն տեղում, էջ 161:

¹¹ Նույն տեղում:

հիշյալ գրքում մերթ հանդես է գալիս իբրև դեպքերի ակա-նատես, մերթ իբրև հրապարակախոս և փաստացի վկայություններով բացա-հայտում թուրքերի սահմանադրության սնանկությունը, նրանց խոսքի և գործի միջև առկա խոր հակասությունները: Գրքում հեղինակը բազում տվյալներ է հաղորդում Վանում, հին Բայազետում, Բադեշում, Սասունում իրագործված հայերի կոտորածների, ամենուրեք տիրող կամայականությունների, հայերի մարդկային իրավունքների ոտնահարման, սովի, ավերածությունների վերաբերյալ: Գ. Շերենցը տպագրության էր պատրաստել նաև «Մոռացված գավառներ, Մոկք և Շատախ» տեղագրական, ազգագրական նյութեր պարունակող, «Կենսագրական Վասպուրականի նշանավոր գրագետ գործիչների՝ Խրիմյան Հայրիկի, Գ. Սրվանձտյանցի և հետևորդների, սկսյալ 1855-1896 թթ. մինչև հանրային կոտորածը» աշխատանքները: Ցավոք, դրանց հրատարակության կամ ձեռագրերի վերաբերյալ չկան տեղեկություններ: Գ. Սրվանձտյանցի կյանքի և գործունեության մասին, նրա մահվան 10-ամյակի առթիվ 1902 թ. «Ազգագրական հանդեսի» 9-րդ հատորում հրատարակվել է Գ. Շերենցի ծավալուն հոդվածը: 1913 թ. Թիֆլիսում «Հովիտ» շաբաթաթերթի N 18-ում, Գ. Սրվանձտյանցի մահվան 20-ամյակի հիշատակին Շերենցը նորից է անդրադառնում նրա գործունեությանը: Կրած տառապանքները, զրկանքները չեն փշրել Գ. Շերենցի կամքն ու ապագայի հանդեպ լավատեսությունը: Հայրենակիցներին ուղղված նրա պատգամը դրա լավագույն վկայությունն է. «Արդարև շատ ու շատ են մեր ցավերն ու բազմակողմանի, անփոխարինելի մեր կորուստը, բայց և այնպես շատ պետք է լինի և մեր համբերությունը. համբերել և տոկալ, հուսալով ապրել, հույսով սպասել և չմոռանալ բնակավայրում թողուցած մեր արենակիցն ու ազգակից, հայրն ու մայր, քոյրն ու եղբայր, որոնց հետ մեկտեղ ողբացինք ու լացինք, վտարանդեցանք մեզ վրա հասած այն սև օրերում, վերահաս վտանգի դառն ժամանակներում»¹²:

Հարազատ ժողովրդի ու նրա մշակույթի անմնացորդ նվիրյալ Գ. Շերենցը վախճանվել է 1921 թ. Թիֆլիսում, 73 տարեկան հասակում:

ГЕВОРК ШЕРЕНЦ

(1848-1921 гг.)

ВАРДАНИЯН С. А.

Резюме

В истории армянской науки и культуры особое место занимает видный фольклорист, педагог, общественный деятель Г. Шеренц. Он известен своими фольклорными, этнографическими и археологическими публикациями («Вана

¹² Նույն տեղում, էջ 4:

саз” I, II тт., “Србавайрер”) и мемуарами о погромах армян в конце XIX в. (“Алтын дереси или ночь в тюрьме Багеша”).